№ 187 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20 — 1907 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20 № 187

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ. օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Գերասիմ Գալստեան և Նատալիա Պողոսեան Եակուլեանները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց դուստր

ԼԻԻԱՍԻ

մահվան մասին, որ տեղի ունեցաւ դեկտեմբերի 7-ին Պետերբուրգում, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Հանգուցեալի մարմինը բերվելու է Թիֆլիս և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Հանգուցեալի մարմինը բերվելու է Թիֆլիս դեկտեմբերի 21-ին, առաւ. ժամը 11-ին, և կայարանից անմիջապէս տարվելու է Խօջիվանքի գերեզմանատունը։
1—1

Նինա Ղազարոսեան և Պետրոս Բալլուեան Յակոբլեանցները խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և բարեկամներին, առաջինը իր սիրելի հօր և նում են իրանց ազգականներին և բարեկամներին, առաջինը իր սիրելի հօր և երկրորդը իր անմոռանալի աներոջ՝

Ղազարոս քահանայ Բաղդասարեան
ՊԱՀԼԱՒՈՒՆՈՒ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 17-ին։ Ամբիծքը կը կատարվի այսօր, դեկտեմբերի 20-ին, ժամը 6-ին երեկոյեան։ Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ դէպի կայարանը ուրբաթ, ամսիս 21-ին, ժամը 12-ին իր բնակարանից (Гановская 18), իսկ թաղումը լինելու է Աբասթումանի եկեղեցու գաւթում 23-ին։
(հ. ու.) 1—2

(ԹԱՒԻԶԻՑ, հեռագրով)
Գեներալ Միրզա Անտոն-խան Երուանդեան, Վարվառէ Առաքելեան, Մարիամ Նազարբէգեան, Զաքարիա Նազարբէգեան յայտնում են խորին վշտով ազգականներին և ծանօթներին, որ կիրակի, դեկտ. 16-ին, Թաւրիզում վախճանվեց երկրատև և ծանր հիւանդութիւնից յետոյ

ՍՕՖԻԱ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ

առաջնի՝ ամուսինը, երկրորդի՝ դուստրը, երրորդի՝ քոյրը և չորրորդի՝ քեռին։
(չ. հ.) 2—2

ԵՂԻՍԱԲԷԹ ՄԻՐԱՅԵԼԵԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄ և ԱՐՇԱԿ ԱՌԱՔԵԼԵԱՆՆԵՐԸ, ՀԵՂԻՆԷ ԱՌՍՏԱՄԵԱՆ խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, որ դեկտեմբերի 16-ին Թաւրիզում վախճանված տիկին

ՍՕՖԻԱ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆԻ

(ծնեալ Առաքելեան), առաջնի տալի, միւսների քրոջ մահվան առիթով նշանակված է

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

հինգշաբթի, դեկտ. 20-ին, Մողնու եկեղեցում պատարագից յետոյ, ժամը 12-ին։
(չ. հ.) 2—2

ԵՂԲ. ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՆԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Խ. և Մ. ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՆԵՐԻ

յայտարարում է ի գիտութ. յարգելի վաճառականների, որ նրա

Մոսկվայի խանութում

վաճառվում են մեծ քանակութեամբ

ԳԱԼԱՆՏԵՐԷՅՆԻ

զանազան ապրանքներ։ Գները շատ մատչելի են։ Պատուէրները կատարվում են անյապաղ և ամենայն ճշտութեամբ։

Հասցէն՝ МОСКВА, Никольская улица, домъ графа Шереметьева, Торг. домъ

„Бр. Х. и М. Меликъ-Марутянцъ“

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ԹԻՖԼԻՍՈՒՄ — ԹԻՖԼԻՍՈՒՄ

(հ. կ.) ա. 15—13

Սումբատովի բաղանիքի

բաժնետէրերը յայտնում են ի գիտութիւն, որ 1908 թ. յունվարի 1-ից բաղանիքը տրվում է կապալով. ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել Ա. Մանթաշեանցի գրասենեակը՝ առաւօտեան ժամը 10-ից—2-ը։
(խ. հ. շ.) ա. 4—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական ազատ կարծիք. Քիւրդական հարցը Թիւրքիայում. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Տեղեկութիւններ գաւառից. Թիֆլիսի քաղաքային դումայի նիստը. Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերութիւնը. Նոր-Բայազէտի գաւառի սովեալների օգտին. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Ռուսաստանի կեանքից. Նամակներ խմբագրութեան. Հայհոյանքների հերոսը. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պրոֆէսոր Տօմսօն. Գործերը Պարսկաստանում. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՅԱՋՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԶԱՏ ԿԱՐԾԻՔ

Ոչ մի ժամանակ ոճրագործների, եղեռնագործների և ամեն տեսակ յանցագործների դէմ ֆիզիքական հալածանքը այնպէս խիստ չէ եղել, ինչպէս այժմ. բայց մենք տեսնում ենք, որ այդ հալածանքը չէ կարողանում վերջ դնել գործվող յանցանքներին։

Արդարև, ամեն տեղ հաստատված է սաստկացրած կամ զինուորական դրութիւն, պատժում են յանցաւորին խրստագոյն կերպով, մաշում են նրանց բանտերում, ուղարկում են տաժանակիր աշխատանքի, բարձրացնում են կախաղան կամ հրացանագրկ են անում։ Եւ դարձեալ յանցանքները շարունակվում են, ստանալով երբեմնապէս սարսափելի արտայայտութիւն, ինչպէս են օրինակ՝ երկաթուղու գնացքների խորտակումը, դրամատների կողոպուտը, պօստի յափշտակումը և այլն։

Քանի դեռ մի քանի յանցանքներ կատարվում էին յեղափոխութեան անունով, հասարակութեան մի որոշ մասը մատի արանքով էր նայում յանցանքների վրա ըստ էութեան, սպասելով որ այդ չարիքը աւելի քան կը հաւասարակշռվի գերազանց մեծ բարիքով։ Բայց, ինչպէս գիտենք, յեղափոխութեան անունը շատ շուտ շահագործութեան առարկայ դարձաւ և շանտաժիստների վոհմակներ սկսեցին յեղափոխութեան անունով վարագուրել ամեն տեսակ կեղտոտ արարքներ։ Ոճրագործութիւնը ստացաւ այնպիսի մեծ ծաւալ և դարձաւ մի այնպիսի հասարակական աղէտ, որ յեղափոխական կազմակերպութիւնները նոյնիսկ ստիպված զգացին յայտարարել թէ նրանք իրանց պատասխանատու չեն համարում գործվող ոճիրների համար։

Սակայն կեանքի բազմաթիւ անկիւններում և ծերպերում յեղափոխականը և ոչ յեղափոխականը շատ անգամ չէին կարողանում որոշակի զատվել մէկը միւսից։ Եւ գործված յանցանքների վերաբերութեամբ մնում էին զանազան շրջաններում անորոշ տրամադրութիւններ, որոնցից անշուշտ օգտվում էին յանցաւոր տարրերը իրանց անզուսպ գործունէութեան համար։

Մի կողմից այդ տրամադրութիւնները, միւս կողմից այն երկիւղները, որոնք պատել էին ազգաբնակութիւնը սարսափների ազդեցութեան տակ, ստեղծեցին մի դրութիւն, որ դարձաւ անտանելի իւրաքանչիւրի համար և որի վերաբերութեամբ մարդիկ վերցրել էին իրանց վրա միայն լուռ հանդիսատեսների դերեր։

Եւ ահա հարց է ծագում հասարակութեան առաջ՝ ինչպէս ազատվել շանտաժիստների լեղէոններից, ինչպէս վերջ տալ քստմնելի ոճրագործութիւններին։

Այդ հարցը մարդկանց մի մասի մէջ այնպէս է վճռվում, որ պէտք է ֆիզիքական ոյժի դէմ հանդէս բերել հակառակ ֆիզիքական ոյժ, ծեծողի դէմ առաջադրել ծեծ, յարձակվողի դէմ յարձակում, սպանողի դէմ սպանութիւն։

Սակայն մի՞թէ այդպիսով կը լուծվի հարցը։

Ոչ։ Չի լուծվի։

Եւ մենք տեսնում ենք, որ չը նայելով ձեռք առնված խստագոյն միջոցներին, ոճրագործութիւնը շարունակում է պահպանել իր գոյութիւնը կեանքի ասպարէզներում և նոյնիսկ զարգանալ ու նոր ճիւղաւորութիւններ ստանալ։

Եթէ ինքը հասարակութիւնը կը պահպանէ տրամադրութիւններ նպաստաւոր դէպի ոճիրները, այն ժամանակ ոչ մի ֆիզիքական միջոց չի հասնի իր նպատակին և հաւանական է, որ նա նոյնիսկ առիթ կը դառնայ նոր թիւրիմացութիւնների, նոր բարդութիւնների։ Հակառակ խմբերը կը սկսեն միմեանց ջարդել և միմեանց կոտորել, կընկնեն անվերջ վրիժառութեան վտանգաւոր հողի վրա և վերջ ի վերջոյ նոր չարիքներ կառաջացնեն հասարակութեան համար, սարսափ ազդելով նրա վրա և ամօթալի պայմանների նոր փականքներ դնելով նրա բերանի վրա։

Մեր հասարակութիւնը ունեցաւ փորձեր այդ ուղղութեամբ. նա կազմեց խմբեր և կամ օգտվեց եղած խմբերից այս ու այն իր նպատակների համար և վերջ ի վերջոյ չը գիտէր, թէ ինչպէս ազատվէր այն «երախտագիտութիւնից», որի անունով ամեն օր առաջադրվում էին այդ խմբերի կողմից պահանջներ և բաւարարութեան պատուէրներ։

Եթէ դու, հասարակութիւն, յիրաւի, ցանկանում ես դրական և ներգործական դեր կատարել, առաջ եկ քո բարոյական ոյժով, քո հրապարակային, համարձակ խօսքով, քո առողջ հասարակական կարծիքով. ձեռք վերցրու անվերջ համակերպվելու, անվերջ շոյելու, անվերջ շողոքորթելու անարգ դիրքից և քաղաքացիական արիութիւն ունեցիր արդարին արդար ասելու, ստորին ստոր, սպիտակին սպիտակ, սեին սև։

Քանի այդ չը կայ, միւս բոլոր միջոցները անզօր են, իսկ ֆիզիքական հալածանքը նոյնիսկ վտանգաւոր։

Ա. Քալանթար

ՔԻՒՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Ֆրանսիական «Temps» լրագրում այս վերնագրով կարդում ենք հետևեալ թղթակցութիւնը Կ. Պոլսից դեկտեմբերի 13 թուով։

«Քիւրդերի Դիարբէքիրի ժօռ կատարած վերջին սպրագործութիւնները կատարելապէս արդարացրին այն նախատեսութիւնները, որ արել էին Թիւրքիային ամենից աւելի համակիր անձիրը, երբ որոշվեց այս ցեղերից գնդեր կազմել և նրանց դնել կանոնաւոր զօրքի նման։ Ի զուր ասում էին Թիւրքերին՝ թէ այն զէնքերը, որ տալիս են քիւրդերին, մի օր հէնց իրանց՝ Թիւրքերի դէմ կը դառնան. ոչինչ չօգնեց։ Արդէն բաւական էր այն, որ այս խորհուրդը առողը մի եւրոպացի էր, որպէս զի խորհուրդը կասկածանքով ընդունվի։ Ծրագրի հեղինակը մարէշալ Շաքիր փաշան էր, որ Պետերբուրգում եղած միջոցին, իբրև Թիւրքական դեսպան, զարմացել էր կօզակների կազմակերպութեան վրա և մտածում էր, թէ չէ՞ր կարելի արդեօք քիւրդերից Թիւրքական կօզակներ կազմակերպել։ Այս ծրագիրը սուլթանի հաւանութիւնն ստացաւ, և 4-րդ զօրաբանակի հրամանատար Զէքի-փաշային յանձնվեց դրա գործադրութիւնը։ Այսպէս վարվելով՝ կարծում էին, թէ այդ անկախ և աւարառու ցեղերը նստողական կեանքի կարելի կը լինի վարժեցել։ Բայց բոլորովին սխալ էր այս հաշիւը։ Քիւրդական ցեղերը մնացին և միշտ էլ պիտի մնան այնպէս, ինչպէս մինչև հիմա են եղել, այն տարբերութեամբ, որ այժմ աւելի մեծ ոյժ ունեն Թիւրքերին դիմադրելու, քան առաջ։ 1896 թ. Սասունի դէպքերից և հայոց առաջին կոտորածներից յետոյ, որոնց մէջ քիւրդերն այնքան մեծ մասնակցութիւն ունեցան, քիչ զարմանք չը պատճառեց, երբ համիդիյէ գնդերը Կ. Պոլիս մտան։ Սա մի արհամարհական ցոյց էր հասարակական կարծիքի և դիպլոմատիայի դէմ, որոնք դեռ՝ հայաբնակ գաւառներում տեղի ունեցած արիւնալից դէպքերի պատճառած մեծ յուզմունքի մէջ էին գտնվում։ Համիդիյէները սէլամլըքի արարողութեան ներկայ եղան, կանոնաւոր զօրքի խմբերի հետ, և երբ իրանց վտիտ ձիերի վրա հեծած անցնում էին Կ. Պոլսի փողոցներով, ժողովուրդը խռնվում էր նրանց տեսնելու և հետաքրքրութեամբ էր ժպիտ անում։ Քիչ յետոյ տեսան, թէ արդէն բաւական էր նրանց ներկայութիւնը Կ. Պոլսում, և նրանց էլ ուղարկեցին իրանց տեղերը։ քիւրդերն իրանք էլ հաւանականերաբար գոհ մնացին այս վերադարձից։ Այն ժամանակից յետոյ նոր համիդիյէ գնդեր կազմվեցին քիւրդերից։

Այսօր քիւրդերն այնչափ ոյժ ունեն, որ նրանց նուաճելու համար, եթէ գործն այստեղ հանի, ամբողջ բանակ է հարկաւոր։ Իմ ասածս կապացուցվի Իբրահիմ փաշայի քիւրդերի դէմ հրամայված արշաւանքից։ Այս Իբրահիմ փաշան շատ բնորոշ և հետաքրքրական դէմք է։ Այսօր նա մօտ 60 տարեկան է։ Նա միլլի կոչված քիւրդական ցեղի գլխաւորն է, բայց նրա իշխանութիւնը ուրիշ ցեղերն էլ են ընդունում։ Նրա ազդեցութիւնը տարածվում է ընդարձակ մի շրջանի վրա, որ եռանկիւնի է կազմում Դիարբէքիրից դէպի Զէզիրէ, Մարդին և Վերանշէհիր։ Այս շրջանի կենտրոնը լեռնային է. այստեղ է Իբրահիմ փաշան արածացնում իր բազմաթիւ ոչխարի հօտերը։ Զմեռը քիւրդերը իջնում են դաշտավայրը՝ ճիշտ այն ժամանակ, երբ հարկաւոր է թալանելու համար հարևան խեղճ գիւղացիներին և երկրագործների աշխատութեան արդիւնքը։ Իբրահիմ փաշայի բանակատեղին Վէրանշէհիր գաւառումն է։ Ընդհանրապէս նա ընակվում է մի մեծ վրանում։ Այստեղ է նա ընդունում իր սատրապներին և հրամաններ է տալիս իր քարտուղարներին. նա ունի ոչ միայն քարտուղարներ, այլ նաև պետական քարտուղարի նման մի պաշտօնեայ։ Այդտեղից է նա, մի խօսքով, կառավարում։ Նա, լինելով խելացի և խորամանկ անձնաւորութիւն, մեծ հարստութիւն է դիզած, որը նրան հնարաւորութիւն է տալիս մեծ պարգևներ տալու, որի փոխարէն նրան հանդիստ են թողնում։

Սրանից մի քանի ժամանակ առաջ պատմում էին, թէ ամեն տարի սուլթանի խոհանոցի համար 200 ուղտաբեռ կարագ էր ուղարկում իր հօտերի արդիւնքից։ Հաշուելով իւրաքանչիւր բեռը 200 քիլօ (մօտ 13 պուդ)՝ այդ կանէ 40,000 քիլօ։ Այս հաշուում հաւանականաբար չափազանցութիւն կայ, բայց պարզեւի ուղարկվելը ճիշտ է։

Այս մարդը՝ Իբրահիմ փաշան՝ զարմանալի կօնտրաստներ է ներկայացնում. հաւատարիմ հպատակ է իր միապետին և միևնոյն ժամանակ իրան անկախ է համարում. գլուխ է տարածում ցեղի և միևնոյն ժամանակ գնդապետ է այդ ցեղերից կազմված կանոնաւոր զօրքի. կանոնաւոր բանակի պաշտօնեայ է և միևնոյն ժամանակ վարնում է իր մօտից բոլոր Թիւրք օֆիցէրներին, որոնք կը համարձակվեն որևէ նկատողութիւն անել իր մարտիկներին կամ նրանց մի բան հրամայել։

Իբրահիմ փաշան ազատեց հայերին, նրանց ապաստարան տուեց իր մօտ, պատսպարեց և պաշտպանեց նրանց, երբ նրանք հալածվում էին Թիւրքերից. նա միացաւ հայերի հետ կառավարչական բռնութիւնների դէմ. նա նրանց եղբայր էր համարում։ Ինչ վերաբերում է վերջին դէպքերին, նա անշուշտ մեղքը պիտի գցէ իր ցեղի մարտիկների վրա, թէ սրանք վարվել են իր կամքի դէմ. այնու ամենայնիւ իրողութիւնը մնում է իբրև փաստ, որ այս անգամ մահմեդական ժողովուրդն է զոհ գնացել Դիարբէքիրի շրջակայքում կատարված բռնութիւններին և եթէ այս բռնութիւնները շարունակվին և ժամանակին չը զսպվին, կարող է քաղաքական պատերազմ ծագել այնտեղ։ 1843-ին Թիւրքերը ամենախիստ կերպով ճաշակեցին քիւրդերի շարժումը, որոնք իրանց դէրէբէյների ղեկավարութեամբ ուզում էին իրանց բնակած երկրին տիրել։ Բաշիղ փաշան էր որ նրանց զսպեց և նա, որ յետոյ պիտի դառնար մարէշալ Մօլտկէ, ժամանակնում էր այս արշաւանքին, իբրև Թիւրքաց ծառայութեան մէջ եղող օֆիցէր։ Բայց այսօր ամենքը կասկածում են, թէ Թիւրքիան կարող կը լինի նոյն խստութեամբ վարվել քիւրդերի հետ»։

Ս.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Շիկահող, 2 դեկտեմբերի

Առածն ասում է՝ «Թանգ տարին ծախողի երեսը չը տեսնես, էժան տարին՝ առնողի»։ Ղափանի ներկայ քաղցը գալիս է մի աւելորդ անգամ էլ հաստատելու ժողովրդի դարաւոր իմաստութիւնը. այս տարի ծախողի երեսին ոչ թէ նայել, այլ ուղղակի թքել պէտք է, այնքան չափ ու սահմանից դուրս են եկել, խիղճ ու պատկառանք մի կողմ դրել... Օրերով են բարձրացնում արտ-

մուքի գինը․ կալի ժամանակ ցորենի մարզանը 3 ր․ էր, մի քանի շաբաթ առաջ 4 ր․, իսկ այսօր 5 ր․։ Եւ շատ բնական է այս երեւոյթը․ ոչ մի տեղ ինքնակամութիւնը, սանձարձակութիւնը, անտէրութիւնը այնպիսի հսկայ չափերով գոյութիւն չեն ունեցել, ինչպէս այժմ մեզ մօտ։ Դեռ կային, երբ բոլորիս համար պարզ էր ներկայ տարւայ սովի անխուսափելի գալուստը, մեր չարչի, խօջա, աղա, պարտատէր և այլն մի չը տեսնված փութկոտութեամբ իրանց հին հաշիւներն էին մաքրում ու ամենը հատիկով և կամ զանազան միջոցներով ցորեն գնում, ամբար տալիս։ Անպաշտպան ու ընդհանուրի ուշադրութիւնից զրկված գեղջուկը մորակի, դագանակի, տուգանքի և, որ գլխաւորն է, նրանց ապագայ «բարերարութիւնից» զրկվելու երկիւղից՝ եղած-չեղածը չափում-տալիս էր․ այնպէս որ օրվայ հացի կարօտ գիւղացիների խղճուկ պարկերը կամաց-կամաց ազաների ամբարները փոխադրվեցին ու այնտեղ էլ կը մնան անկասկած մինչև այն հոգևարքի օրը, երբ ամենաբարձր գինը կոբոշվի… Իսկ այդ օրը այնքան էլ հեռու չէ, քանի այսպիսի անուշադրութեան, ինքնագլխութեան են մատնված մեր գիւղերը։ Ի՞նչ խօսք, այդ բոլորի վրա պիտի հսկեն գիւղական տանուտէրներն իրանց օգնականներով, քահանաներն իրանց բարոյական հեղինակութեամբ, որոշ գին վճռեն, պատժեն զանցառուներին, ցուցակագրեն ցորենատէրերին, կազմեն քաղցածների ցուցակը ու միահամուռ ուժերով անեն՝ ինչ ներսից հնար է անել, իսկ ինչ դրսից պէտք է՝ դիմեն անդադար, ամեն դուռ բաղխեն… Սակայն մեր նահապետական գիւղերում դրանց մի մասը ամենամեծ չարչիներ ու վաշխառուներ են, միւս մասը՝ ապշութեան ու գինեմոլութեան տիպեր (մի երկու բացառութիւնը յարգելի է), որ դեռ անհամբեր սպասում են աւելի ծանր ու դաժան օրերի…

Այս աննորմալ դրութեան վերջ տալու միակ խելացի միջոցն է՝ բոլոր գիւղերի երկ-երկու ներկայացուցիչներից համագաւառական մի ընդհանուր ժողով գումարել, որ ընտրէ մի կենտրոնական մարմին 3—5 հոգուց բաղկացած, տայ նրան արմտիքի գինը որոշելու, գիւղերի վրա հսկելու, անհնազանդներին պատժելու, ընդհանուր Ղափանի կողմից դիմումներ անելու, ստացված նպաստները բաշխելու լիազօրութիւնը․ այդ մարմինը կունենայ իր ներկայացուցիչները իւրաքանչիւր գիւղում կամ հասարակութեան մէջ՝ յանձին որևէ բանիմաց անձնաւորութեան՝ և, կառավարութիւնից հաստատվելուց ու նրա հովանաւորութիւնը վայելելու յոյսն ունենալուց յետոյ, անմիջապէս գործի կանցնի։

Իսկ թէ ով պիտի գլուխ անցնէ գործին, ժողով հրաւիրէ և այլն, ինչն ըստ ինքեան հասկանալի է դառնում, երբ նկատի ունենանք, որ նպաստներ բաշխելու և Ղափանի այլ կարիքների մասին խորհելու համար եղել է և այսօր էլ անուանական գոյութիւն է պահում անցեալ սովին ընտրված ու ապա մի քանի անգամ փոփոխութիւնների ենթարկված մի կազմ։ Այսօր այդ կազմը, որ մի անօրինակ ճարպկութեամբ կարողացաւ իր միջից հանել մի քանի գործունեայ ու ձեռնհաս անդամների, լոկ բուրժուական մի համախմբում է։ Անձնազոհ ու եռանդուն Սմբատ-բէկի հեռանալուց յետոյ՝ այդտեղ մնացել է մի Իվան-բէկ, որ զուր է ճիգ թափում «չարունակ զբաղված», «ժամանակ չունեցող» ընկերներին գէթ մի անգամ ժողովի հրաւիրելու, կամ ամբողջ աշխատանքը իր անզօր ուսերի վրա տանելու։ Ահա այդ պարոններն են, որ, պատկառելով իրանց ամօթալի անգործութիւնից, պարտաւոր են թոյլտւութիւն ստանալուց յետոյ ընդհանուր ժողով անել, մի անգամ էլ տալ իրանց անպտուղ գործունէութեան հաշիւը և նոր ընտրութիւն կատարելուց յետոյ ասպարիզից հեռանալ։

Գեղջուկը յուսահատութիւնից իրան կորցնում է․ գիւղերը տնքում են սովի նախօրեակին․ իսկ իւրաքանչիւր յապաղում փութացնում է աղէտի գալուստը։

Արքայիկ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏԸ

Դեկտեմբերի 17-ի երեկոյեան ժամը 8-ին նշանակված էր Թիֆլիսի քաղաքային դումայի հերթական նիստը․ բայց փոխանակ նշանակված ժամին բանալու նիստը, քաղաքագլուխը բաց արեց, համարեա, ժամը 9-ին, ստիպված լինելով քաղաքի ձայնաւորներին առանձնասենեակից դահլիճ ներս հրաւիրելու համար վատնել զանգահարութեան վրա մօտ տասը րոպէ։

Նիստը բացվելուց յետոյ դուման նախ լսում է նախորդ նիստի օրագիրը և ապա դիմում է իր հերթական զբաղմունքներին։ Քաղաքագլուխը քննութեան է առաջարկում նշանակված գործերից ամենավերջին կէտը՝ քաղաքային գնահատողների ընտրութիւնը։

Այդ հարցի շուրջը պտտւում է երկու հոսանք․ մէկը անհրաժեշտ է համարում նախքան ընտրութեան դիմելը պարզել սկզբունքով կարող է ձայնաւորը միաժամանակ վարել այդ պաշտօնը թէ ոչ։ Վերջապէս այդ սկզբունքային հարցի մասին հարկաւոր է իմանալ դումայի տրամադրութիւնը։

Իսկ միւս հոսանքը՝ վաղաժամ է համարում նախապէս զբաղվել այդ հարցով, քանի որ յայտնի չէ, թէ ով է ընտրվելու՝ ձայնաւոր թէ ոչ ձայնաւոր։

Քաղաքագլուխը քուէարկութեան է ենթարկում այդ երկու կարծիքները։ Մեծամասնութիւնը չէ ուզում նախապէս քննութեան ենթարկել այդ հարցը։

Դրանից յետոյ թերթիկներով առաջարկվում են մի քանի թեկնածուներ, որոնցից միայն Բաղդասարեանն (ձայնաւոր) ու Մելքոնբեկեանը դրվում են քուէարկութեան։

Վերջին հարցը այդպէս կարգաւորելուց յետոյ, դուման վերադառնում է ամենաառաջին հարցին․ կարդացվում է վարչութեան զեկուցումը Մ. Մ. Կորգանովի տունը առնելու մասին։

Դուման, ընդունելով վարչութեան զեկուցումը, հրաժարվում է առաջարկված պայմաններով ձեռք բերել այդ տունը։

Տեղի է ունենում ընդմիջում, որի միջոցին կատարվում է քաղաքային գնահատողների ընտրութիւնը․ ձայնաւոր Բաղդասարեանը ստանում է 33 ձայն, իսկ Մելքոնբեկեանը՝ 47։ Երկուսն էլ համարվում են ընտրված։

Բաղդասարեանի ընտրութիւնը առիթ է տալիս ձայնաւորներին վերանորոգել ընդհատված հակաճառութիւնները սկզբունքային հարցի մասին․ ոմանք պահանջում են խակոյն քննել․ իսկ ուրիշները՝ յետաձգել։

Վարչութեան անդամ Ա. Ի. Խատիսեանը նկատում է, որ բացի դրանից կան քաղաքային 7 ուրիշ պաշտօններ էլ, որոնց մասին հարկ կը լինի խօսել․ աւելի լաւ է հարցի քննութիւնը յետաձգել, մինչև որ այդ առիթով վարչութիւնը իր զեկուցումը ներկայացնի։

Դուման որոշում է յետաձգել այդ հարցի քննութիւնը յաջորդ նիստին։

Ապա քննութեան է ենթարկվում ամբողջ վեց տարի շարունակվող մի գործ՝ տնատէր Միրզաշվիլու փաստների պահանջը քաղաքից։

Ի նկատի առնելով որ Միրզաշվիլին որոշ, կոնկրետ պահանջ չէ առաջարկել, որպէսզի իրաւաբանական մասնաժողովը հնարաւորութիւն ունենայ որևէ կարծիք յայտնելու այդ հարցի մասին, դուման առաջարկում է իրաւաբանական մասնաժողովին հաւաքվել վարչութեան հետ միասին, հրաւիրել նաև Միրզաշվիլուն և քննել այդ խնդիրը ու ապա առաջիկայ հինգշաբթի զեկուցանել դումային։

Վերջում երկար վիճաբանութիւնների տեղիք է տալիս քաղաքային վարչութեան կազմած դումայի 1908 թւի հերթական նիստերի ցուցակը։

Խ. Ա. Վերմիշեանը յայտնում է, որ եթէ հին կարգը շարունակվի, դուման անկարող կը լինի բեղմնաւոր աշխատանք կատարել, հարցերը կը մնան, կը ձգձգվեն։ Պէտք է անցնել նոր՝ աւելի նպատակայարմար սեսսիոնի կարգերի։ Աւելի լաւ է համարում նշանակել ամսական մի նիստ, բայց ամբողջ օրը՝ առաւօտից մինչև երեկոյ զբաղվել հարցերի քննութեամբ և եթէ մի հարց չը վերջանայ այդ օրը, հաւաքվել յաջորդ օրն էլ։ Այդ առաջարկը անելով, ճառախօսը նայում է հարցին միայն ազգաբնակութեան շահերի տեսակէտից, բայց ոչ ձայնաւորների ձևական յարմարութիւնների տեսակէտից։ Իսկ որ կարելի է այդ ուղղութեամբ բեղմնաւոր դարձնել դումայի նիստերը, առաջարկում է մի օր նշանակել փորձի համար։

Ի. Մ. Դօլուխանեանը միանում է այդ հարցին և պատճառաբանում է, որ անհնարին է երեկները աշխատել, որ ձայնաւորներից շատերը գալիս են կարծես սովորութեան համար, այլ ոչ գործ կատարելու։

Դուման ի վերջոյ ընդունեց քաղաքային վարչութեան ներկայացրած 1908 թ. հերթական նիստերի ցուցակը։

L.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

1907 թւի դեկտեմբերի 23-ին յօգուտ Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերութեան տեղի է ունենալու ծաղկազարդ երեկոյթ երաժշտական բաժնով և հետաքրքիր ծրագրով․ կը խաղան մի քանի տեսարաններ «Աիդա» և «Տրուբադուր» օպերաներից հայերէն լեզուով։

Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերութիւնը երկար տարիներ շարունակելով իր համեստ գործունէութիւնը՝ իւրաքանչիւր տարի մի քանի տասնեակ շրջանաւարտներ է տալիս իր արհեստանոցից, որոնց շնորհիւ բազմաթիւ հայ չքաւոր ընտանիքների նիւթական դրութիւնը բարելաւվում է․ նրանք իրանց սեփական աշխատանքով կարողանում են հայթայթել թէ իրանց և թէ ընտանիքի ապրուստը և այսպիսով բարձրացնում են այդ դասակարգի տնտեսական ու բարոյական դրութիւնը։

Բացի այդ կար ու ձևի արհեստանոցը, ինչպէս մենք տեղեկացանք ընկերութեան 25-ամեայ յոբելեանական տեղեկագրից, ընկերութիւնը ցանկանում է մօտ ապագայում ընդարձակել իր գործունէութիւնը՝ արհեստների նոր ճիւղեր ունեցանելով այդ դասակարգին։

Ցոյս ունենք, որ Թիֆլիսի հասարակութիւնը կը պատէ իր ներկայութեամբ վե-բոյիշեալ ընկերութեան օգտին կայանալիք երեկոյթը, միջոց տալով այդ օգտակար ու համակրելի հիմնարկութեան իրագործել իր ընդգծած ծրագիրը յօգուտ հայ չքաւոր դասակարգի։

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՕԳՆԵԼ

Դեկտեմբերի 27-ին Ներսիսեան դպրոցի չքաւոր աշակերտների օգտին դպրոցի դահլիճում կայանալու է պարահանդէս։

Դառն է, արդարև, հայ մանկտի դրութիւնը ընդհանրապէս և Ներսիսեան դպրոցի սաների դրութիւնը մասնաւորապէս՝ նիւթական ապահովութեան տեսակէտից, եթէ հաշուի չառնենք մի քանիսի ծնողների ապահով և հարուստ վիճակը։ Ամենայն իրաւամբ կարելի է ասել, որ 99 տոկոսը ամենաղքատ և չքաւոր դասակարգիցն է։ Ներսիսեան դպրոցը, լինելով ազգային, այն էլ բարեգործ մի հաստատութիւն, խորթ է եղել հարուստ դասակարգին այն բանում, որ իր մէջ սնուցել, կրթել է միայն խեղճերի և օրական պարէնը հազիւ հայթայթող ընտանիքների զաւակներին։ Քաղաքի խեղճ խաւերի, գիւղական աղքատ ընտանիքների որդիներն են, որ գիտութիւն և կրթութիւն են ստանում Ներսիսեան և նման մի քանի դպրոցներում։ Դպրոցը իր միջոցներով ամենաաղքատներին հնարաւորութիւն է տալիս ուսումը շարունակելու, տալով սկիզբներում 7, այժմ 5 ր. ամսական և ճաշ։

Ներսիսեան դպրոցի աղքատ սանը, կուլ մղելով կեանքի գոյութեան դէմ, այժմեան պայմաններում յիշեալ խղճուկ և թէկուզ նաև ծնողների չնչին օգնութեամբ պէտք է շարունակէ իր ուսումը, պէտք է լոյս ձեռք բերէ՝ ազատութեան գրկում խարխափող իր համագիւղացիների մէջ տարածելու համար։ Ներսիսեան դպրոցի աշակերտներն են, որ ձիւն-ձմեռւայ ցրտերին, պատառոտած «չուստերով», ամառւայ բարակ «բլիւզով», գրքերը կռան տակ, քաղաքի հեռաւոր թաղերից գալիս են Ներսիսեան դպրոց ուսանելու։ Այս, դառն է աղքատ աշակերտի դրութիւնը…։

Այդ աղքատ աշակերտների օգտին է տրվում դեկտ. 27-ի պարահանդէսը։ Նրանք են, որ աչքները ուղղել են դէպի նոր հասարակութեան ուշադրութեանը, համոզված, որ հայ գիտակից մասը բնաւ չի խուսափի կատարել իր վսեմ պարտքը՝ դէպի ուսանող ժառող սերունդը։ Հայ հասարակութիւնը բարոյապէս պարտաւոր է օգնել նրան, միջոց տալ աւարտել իր ուսումը և նպաստել դպրոցական կեանքում նրա իդէալական ձգտումներին, պարտաւոր է, որովհետև Ներսիսեան և միւս դպրոցները այն սրբազան վայրերն են, որ պատրաստում են ջահեր՝ ապագայում լուսաւորելու հայկական անմխիթար իրականութիւնը։

Ուստի աջողութեան նպաստելը ամեն մէկի սեպուհ և սրբազան պարտականութիւնն է։

Եւ հաւատանք, որ դեկտեմբերի 27-ի պարահանդէսի արդիւնքը կը սփոփէ օգնութիւն ակնկալող աղքատ սաներին։

Միջոց տանք նրանց համեստութեամբ հասնելու իրանց նպատակին և վսեմ կոչմանը։

Ս. Եւ.

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ ԳԱՒԱՌԻ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Մինչև այսօր յատկապէս Նոր-Բայազէտի գաւառի սովեալների համար ստացել ենք 567 ր. 24 կ. (տես «Մշակի» նախորդ համարները)։ Մենք ուղարկեցինք երկու նուագով 529 ր. 50 կ. Նոր-Բայազէտի քաղաքագլուխ պ. Բատիկեանին՝ նպաստամատոյց մասնաժողովին յանձնելու համար․ փոխադրութեան ծախք եղաւ 1 ր. 50 կ. և մեզ մօտ մնաց այժմ 36 ր. 24 կ.։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Դեկտեմբերի 18-ին, առաւօտեան ժ. 3-ին, Ալաբաշլի և Շամխոր կայարանների միջև պօստային № 4 գնացքը խորտակվել է։ Ստացված տեղեկութիւնների համաձայն, անվնաս են մնացել գնացքի վերջին երկու վագոնները․ միւսները բոլորովին ջարդ ու փշուր են եղել։ Խորտակման պատճառը անյայտ է։ Կան սպանվածներ և վիրաւորվածներ։ Մանրամասնութիւնները դեռ անյայտ են։

◆ Մեզ խնդրում են տպել հետևեալ հաշիւն այն գրական-երաժշտական երեկոյթի, որը կայացաւ նոյեմբերի 25-ին Բագուի Հ. Մ. Ը. դահլիճում ի նպաստ Նուխու հայոց երկսեռ ծխ. դպրոցների։ Մուտք.—Տոմսակների վաճառումից 742 ր. 40 կ., բուֆէտից 52 ր. 24 կ., վիճակախաղից 119 ր. 10 կ., ծաղիկներից 46 ր. 70 կ., կօնֆետտիից 25 ր. 86 կ., ծրագիրներից 13 ր. 90 կ., նուիրատւութիւններից 13 ր. 90 կ., ընդամէնը՝ 1014 րուբլի 10 կօպէկ։ Ծախս. — Շինութեան վարձ 50 ր., օրկեստրի 56 ր., սազանդարների 20 ր., մարկաների, յայտարարութեան, ծաղիկների, զանազան իրերի վճակախաղի համար եւայլն՝ 227 ր. 10 կ., ընդամէնը՝ 353 ր. 10 կ.։ Մնում է զուտ արդիւնք՝ 661 ր.։ Երեկոյթի կարգադրիչները և կազմակերպող Բ. Ա. Մակեդոնսկին յայտնում են անկեղծ շնորհակալութիւն իրանց սիրալիր մասնակցութեան համար՝ օր. Ալիխանեանին, պ. պ. Տէր-Գրիգորեանին, Մ. Դօրիերտին, Լևինին, դերասան Մանուէլեանին, օգն. երդ.-հաւատարմատարի Աւետեանին, Ն. Բարհանեանին և բոլոր կարգադրիչ անձնաւորութեանց, որոնք մեծապէս նըպաստել են երեկոյթի աջողութեանը։

◆ Դեկտեմբերի 25-ին գիւղատնտեսական ընկերութեան շինութեան մէջ կը կայանայ ընկերութեան խորհրդի անդամների խորհրդակցութիւնը․ կը քննվի «գինու մասին» հարցը։

◆ Բժիշկ Վ. Արծրունին խնդրում է մեզ յայտնել․ «Ստացված է Պետերբուրգից պ. Ալ. Վիրաբեանի ձեռքով ժողոված 102 ր. 40 կ., Նորադուզի սովեալների օգտին և յանձնված է հ. Մուրադբէգեանին։ Նուիրատուներն են՝ Յ. Սվէչնիկեանց 15 ր., Ոմն 15 ր., Ա. Վիրաբեանց 5 ր., Զ. Մելիք-Ամիրջանեանց 5 ր., Բ. Բաշինջաղեանց 3 ր., Գ. Սուքիասեանց 3 ր., Վ. Ն. Սեֆերով 10 ր., Թ. Խաչատրեանց 1 ր., Գ. Դոնիկեանց 1 ր., Մ. Դոնիկեանց 1 ր., Դ. Գուրջեանց 10 ր., Գ. Բեգլեանց 2 ր., Մելիք-Սարգսեանց 3 ր., Բունիաթեանց 3 ր., Իպրաշեանց 1 ր., Ո. Յովակիմեանց 1 ր., Ղուկասեանց 1 ր., Ա. Սարգսեանց 2 ր., Ա. ք. Շխեանց 1 ր., Կ. Վեքիլեանց 5 ր., Բ. Ղասաբեանց 2 ր., Ոմն 1 ր., Աւագեանց 2 ր., Կանդեանց 50 կ., Գասպարեանց 1 ր., Տէր-Գաբրիէլեանց 30 կ., Լէյզերովիչ 2 ր.»։

◆ Ջերմապահութեան և մեղուաբուծութեան դասընթացքները հիմնելու ժամանակ, որոնց համար ամեն տարի ուղարկվում էին բազմաթիւ անձինք կրթական մարմնից, կովկասեան ջերմապահական կայարանը նշանակում էր արձակուրդ, յունիսի 15-ից մինչև օգոստոսի 1-ը։ Ժամանակի ընթացքում ուղարկվող ուսուցիչների թիւը պակասեց, իսկ գիւղատնտեսների և մասնաւոր ունկնդիրների թիւը աստիճանաբար սկսեց մեծանալ։ Ուստի, ջերմապահութիւնը և մեղուաբուծութիւնն անցնելու ժամանակ դասընթացքները լսողներին մեծ յարմարութիւններ տալու նպատակով, միաժամանակ ժամանակակից է հանդիսանում նրանց արձակուրդ տալ ջերմապահական կայարանի գործնական տընտեսութեան ժամանակ, այսինքն ապրիլի 15-ից մինչև յունիսի 15-ը, երբ տեղի են ունենում ջերմապահութեան և մեղուաբուծութեան գլխաւոր աշխատանքները։ Այդ իսկ դիտումներով կովկասեան ջերմապահական կայարանին կից գործնական աշխատանքներով կատարվող ջերմապահութեան և մեղուաբուծութեան դասընթացքները առաջիկայ 1908 թ. կը սկսվեն Զատկի շաբաթից յետոյ և կը տևեն մօտաւորապէս մինչև յունիսի 15-ը այն հաշուով, որ կարելի լինի զբաղվել և սերմ պատրաստելով։

◆ Իշխանութեան կարգադրութեամբ դադարեցրած է վրացերէն լեզուով լոյս տեսնող «Ցիս-Նամի» լրագրի հրատարակութիւնը։ Լրագիրը հազիւ մի շաբաթ գոյութիւն ունեցաւ։

◆ Այսօր Թիֆլիսի քաղաքային դումայի նիստի շարունակութիւնն է դումայի դահլիճում։ Ի միջի այլոց կը քննվեն մատակարարական մասնաժողովի զեկուցումը՝ համաշխարհային հացի շուկայի դրութեան մասին, և պօլիտեխնիկումի համար հողաբաժին ընտրելու մասին քաղաքային վարչութեան զեկուցումը։

◆ Ստացանք հետևեալ նոր գրքերը․ 1) Միրզայի «Այրի քահանաների կրկնամուսնութեան խնդրի առթիւ», 2) Ե. ա. ք. Գեղամեանցի «Մտորումներ», արտատպած «Հովիւ» շաբաթաթերթից, գինն է 25 կ., 3) Ջեմլեակի «Ինչպէս են կռւում գիւղացիք հողի և ազատութեան համար», թարգ. Յովհ. Լազ., գինն է 10 կ., 4) Իսրայէլ Սարկաւագի Վաղարշապատում հրատարակած «Քնարիկ ժողովրդական ձայնագրեալ երգերի», տետրակ Ա., գինն է 15 կ., 5) բժ. Ա. Բուդաղեանի «Ժողովրդական առողջապահութիւն», գինն է 10 կ.։

◆ «Մշակի» երէկվայ համարում մի սխալ էր սպրդել․ Անդրկովկասի ազգաբնակութեանը մատակարարական օգնութիւն հասցնելու վերաբերութեամբ «Վերջին տեղեկութիւնների» բաժնում գրված էր, որ Դաղստանի շրջանին յատկացված է 400,000 րուբլի․ պէտք է լինի՝ 4,000 ր.։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեկտեմբերի 18-ին չորս զինված մարդիկ, մտնելով Մուրավիեվսկի փողոցում Նիկօլայ Չխեիձէի բնակարանը, մահվան սպառնալիքով կամեցել են փող կորզել, բայց բարձրացրած աղաղակներից թողնում փախչում են։

Դեկտեմբերի 17-ին իշխ. Նիկօլայ Երզութեան-Երկայնաբազուկի տնից, որ գտնվում է Կաթօլիկեան փողոցում, կեղծ բանալիքով գողացված է 360 րուբլու զանազան արծաթէ և այլ իրեր։

Գինեվաճառ Սերգէյ Փարսադանեանի տնից, նրա ծառայողներից չորս հոգի, գողանում են 100 ր., բայց ոստիկանութեանը աջողվում է ձերբակալել գողացողներին և վերադարձնել գողացված փողից 65 ր. տիրոջը։

Դեկտեմբերի 18-ին Մուխրանսկի փողոցում ոստիկանութիւնը ձերբակալում է Սաքուլ Պետրոսեանին, որի մօտ գտնում է «Սմիտ և Վեսօն» սիստեմի ատրճանակ 12 փամփուշտներով։

Դեկտեմբերի 19-ին, գիշերվայ ժամը 12 և կէսին, հերթապահութիւնը փոխելու ժամանակ, քաղաքապահ Բուլիչէվը սկսում է ծեծադել նզօրով քաղաքապահի վրա, որը թէև հարբած է լինում, բայց մի քանի անգամ նախազգուշացնում է Բուլիչէվին՝ չը ծաղրել նրան և վերցնում է հրացանը ձեռքին։ Այդ ժամանակ լըսվում է կրակոց, որով տեղն ու տեղը սպանվում է Բուլիչէվը։ Դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոց։

Դեկտեմբերի 18-ին, երեկոյեան ժամը 8-ին, երեք զինված մարդիկ մտնում են Սօլոմօն Մեչետուրիշվիլու բնակարանը, Եղաանի փողոցում, և յափշտակում են 250 ր.։ Այս փողերը պատկանելիս են եղել Դարչօ Կօչկելաշվիլուն։

Դեկտեմբերի 18-ին ոստիկանութիւնը գտնապան Իվան Բաղդասարովի տանը գտնում է 7 զոյգ կօշիկ, Պետրովի խանութից 500 րուբլու գումարի գողացված ապրանքից։ Բաղդասարովը յայտարարում է, որ դեկտեմբերի 15-ին նա այդ իրերը գտել է Նազարէվսկի փողոցում և տարել է տուն պահելու, մինչև որ տէրը լոյս կընկնի։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Մոսկվայի քաղաքապետութեան հետ մօտ յարաբերութիւն ունեցող շրջաններում, «Колоколъ» լրագրի ասելով, լուր է տարածվել, որ Մոսկվայի քաղաքապետ է նշանակվում գեն. Դումբաձէ։

◆ Հարաւ - արևելեան երկաթուղիները այլևս անտրացիտ չեն մատակարարում։ Վորոնեժում անտրացիտի սով է տիրում։ Գործարանները, խոշոր արդիւնաբերական ձեռնարկութիւնները, հասարակական հաստատութիւնները մեծ կարիք են զգում վառելիքի․ չքաւոր ազգաբնակութիւնը մեծ զըրկանքներ է կրում կրկնակի գներ վճարելով։ Սևատրականութեան դիմումը Պետերբուրգ՝ մնացել է անհետևանք։ («Рус. В.»)

◆ Օրլով քաղաքում մահվան դատապարտված երկու կողոպտիչներին պատժելու համար Վարշավայից շտապով յատուկ դահիճ է պահանջվում։ («Гол. М.»)

◆ Վլադիկավկազի և Պետերբուրգի քաղաքային դումաները խնդրամատոյց են եղել միջնակարգ դպրոցներում փոխադրական քննութիւնները վերացնելու մասին։ Վլադիկավկազի դումային դրդել է այդ քայլը անելու մի միջնակարգ դպրոցի աշակերտի ինքնասպանութեան դէպքը, «փոխադրական քննութեան» ժամանակ կտրվելու պատճառով։ («Рѣчь»)

◆ Նիժեգորոդեան լրագիրները հաղորդում են, որ նահանգական զեմստվոյին վարչութեան զեկուցումների մէջ առաջ են բերված տեղեկութիւններ առաջնակարգ մթերքների թանգութեան մասին՝ վերջին 5 տարիների ընթացքում՝ 1902—1907 թւականը։ Հաճարի հացը (րժանոյ) վերոյիշեալ ժամանակամիջոցում թանգացել է 59 տոկոսով, սպիտակը՝ 18 $^{3}/_{4}$ տոկ., իւղը 12 տոկ., ձուն՝ 25 տոկ., միսը՝ 15—23 տոկ., կաթը՝ 35 տոկ., բրինձը՝ 36 տոկ., փայտը՝ 13 տոկ.։ Դրա համաձայն թանգացել են և միւս մթերքների գները։

◆ «Утро» լրագիրը հաղորդում է, որ Մոսկվայի «Босяцкая газета» լրագրի մէջ լոյս տեսած «Եկատերինօսլավ քաղաքի գաղտնիքները» յօդուածը արտասովոր իրարանցում առաջացրեց Եկատերինօսլավ քաղաքի հասարակական կարծիքների մէջ։ Այդ յօդուածում ասված է, որ մի քանի պատւաւոր ծերեր և ուղղակի հասունութեան հասած մարդիկ կազմակերպել են մի «լիգա» երկսեռ երիտասարդներից և որ այդ լիգայի անդամները անձնատուր են լինում ազատ սիրոյ, յատկապէս այդ նպատակով հրաւիրված նիստերում։ Այդ սկանդալը պատճառ է հսկայական չափեր ստանալ, և ծնողական ժողովներից մէկում արդէն պաշտօնապէս հարց է յարուցվել այդ գաղտնի լիգայի մասին։

◆ Պետական Դումայի անդամ Պ. Ն. Միլիւկովը դեկտեմբերի 12-ին ուղևորվել է Ամերիկա, ուր հրաւիրված էր դասախօսութիւն կարդալու Ռուսաստանի մասին։ («Тов.»)

◆ Արհեստակցական միութիւնների կենտրոնական բիւրօն ուղարկել է Պետերբուրգի արհեստակցական բոլոր միութիւնների վարչութիւններին հարցաթերթեր (անկետներ) պարզելու բանւորի միջին բիւջէն, նրա ծախսերը առաջին անհրաժեշտութեան մթերքների և կուլտուրական պահանջների գոհացում տալու համար։ Բիւրօն առաջարկում է միութիւնների վարչութիւններին հարցաքննել միայն այն բանւորներին, որոնք վերջին տարիների ընթացքում չեն փոխել իրանց արհեստը և քիչ թէ շատ չեն տուժել անգործութիւնից։ («Тов.»)

ԺՈՒՐՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՋԱՐԴԸ ՕԴԵՍՍԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

«Рус. Сл.» լրագրին հեռագրում են հետևեալը․ «Քաղաքային դումայի վերջին նիստի ժամանակ մի արտասովոր սկանդալ տեղի ունեցաւ, որը ուղղված էր առաջադէմ մամուլի ներկայացուցիչների դէմ էլեքտրաքարշի գործի առիթով։ Վերջինս մի շարք յօդուածներով ապացուցանում էր բելգիական ընկերութեան հետ համաձայնութիւն կայացնելու վնասակարութիւնը և ձայնաւորների մեծամասնութեան հակահասարակական, ոչ անաչառ, կողմնակի ազդեցութիւնից ոչ ազատ վերաբերմունքը դէպի քաղաքային շահերի համար այդ վերին աստիճանի կարևոր գործը։ Դուման հարկաւոր չը համարեց հրաւիրել ձեռնարկողներին, իսկ ֆինանսների մինիստրի նախկին օգնական Վ. Ի. Կովալևսկուն ուղղակի անմիտ պայմաններ առաջարկեց,

օրինակ, անմիջապէս ժոցնել տասը միլիօն։

Բելգիական ընկերութեան աննպաստ առաջարկները վերջնականապէս ընդունելուց յետոյ, սեւ հարիւրեակայինները, յատուկ կազմված «հանդիսականների» աջակցութեամբ զինված տխրահռչակ բեզլիններով, ջարդի ենթարկեցին մամուլի ներկայացուցիչներին։

Առաջինը սկսեց ձայնաւոր կապիտան Նազօրսկին, մի կատաղի ճառով յարձակվելով մամուլի վրա։ Նրա օրինակին հետեւեց մի ուրիշ ձայնաւոր, ժամանչելով ժուրնալիստների սոսխոսութեան և փաստերը գիտութեամբ յեղաշրջելու մէջ։

Այդ ազդանշան եղաւ կրքերի բորբոքման։ Լսվեցին սպառնալիքներ և աղաղակներ։

Ձայնաւորները կատաղութեամբ ճօճում էին բռունցքները և գոռում լրագրական աշխատակիցների հասցէին. «անիրաւներ, պալլեցներ, շանտաժիստներ»։

Օթեակում նստած աշխատակիցները ուզում էին դուրս գալ հեռանալ, բայց արդէն շրջապատված էին անյայտ, կատաղութեան հասած, մանչացող մարդկանցով, որոնք սպառնում էին նրանց բռունցքներով։

Ժուրնալիստները օթեակից դուրս փախան և ապաստանեցին վարչութեան սենեակներից մէկում։

«Одесск. Обозрѣніе» լրագրի աշխատակցին հասաւ ամբոխը դումայի շինութեան մէջ և սաստիկ ծեծի ենթարկեց։ Արիւնաշաղախ և ուշաթափ դրութեան մէջ նրան տարան իր բնակարանը։

Ծեծի ենթարկվեց գեղարուեստական դըպրոցի աշակերտներից մէկը, որին նոյնպէս լրագրական աշխատակցի տեղ էին ընդունել։

Ժուրնալիստներին սպասում էին դումայի շինութեան մուտքի առջև, որոնում էին նրանց։ Այդ պատճառով նրանք ստիպված էին նստել ներսում և իրանց ապաստարանից դուրս եկան միայն այն ժամանակ, երբ արդէն դահլիճն ու հրապարակը դատարկված էր։

Քաղաքագլխի օգնական Մօխեեվը միջոցներ ձեռք չառաւ ժուրնալիստներին վտանգից ապահովելու համար և չը հեռացրեց «կատաղած» հանդիսականներին։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պարիզ, 8/21 դեկտեմբերի

Պարտք կը համարենք ձեր Թերթի միջոցով յայտնել այն խորին ցաւը զոր մեզ ազդեց Պերճ Պռօշեանցի մահը։ «Սօս եւ Վարդիթերի» հեղինակը, իբր գրագէտ, իբր ուսուցիչ և իբր ազգասէր, ամբողջ հայութեան ծանօթ էր իր բազմամեայ պատկառելի գործունէութեամբ։ Մեր գրականութեան մէջ իր անունը պիտի մնայ անկորուստ և միշտ սիրելի, շնորհիւ իր համեղ ու հայադրոշմ գործերուն, որոնք անսպառ գանձարան մըն են հայ ժողովրդական բարքերու, աւանդութեանց և լեզուի, և ինքնատիպ ցոլացում մը զուտ հայ զգայնութեան, սրամտութեան և ոճի։

Ցարգանքով ու խոր վշտով կը մասնակցինք այն սուգին, որով այդ ալեզարդ բազմարգիւն գործիչին մահը կը համակէ հայութիւնը։

Ի դիմաց Պարիզի Հայկական Միութեան Տնօրէն Ժողովի՝

Ատենապետ՝ Ն. Ներսէսեան

Ատենադպիր՝ Ա. Չօպանեան

—

Թիֆլիս, 19 դեկտեմբերի

Անկարող լինելով գնալ Թաւրիզ ներկայ լինելու մեր սիրելի քոյր՝ տիկին Սօֆիա Երուանդեանի Թաղմանը, որ կատարվելու է այսօր, և պսակ դնելու նրա դագաղի վրա, մենք, նրա եղբայրները և քոյրը, աւելի նպատակայարմար համարեցինք պսակի փոխարէն 300 րուբլի նուիրել Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան, որպէս զի այդ գումարի տոկոսիքը ամեն տարի յատկացվի մի չքաւոր աշակերտի կամ աշակերտուհու ուսման գործին։

Հեղինէ Առստամեան

Համբարձում Առաքելեան

Արշակ Առաքելեան

—

Թիֆլիս, 19 դեկտեմբերի

Վերջին ժամանակներս Կարսում իմ նըկատմամբ տարածվում են Թեր և դէմ լուրեր և աննպաստ կարծիքներ, առաւելապէս ցիրկ պահող Թուրք Ֆերրէրից արված դրամական պահանջի վերաբերմամբ։

Գտնելով սոյնանման լուրերի տարածումը յետին մաքերով առաջնորդված՝ սրանով գալիս եմ մի անգամ ընդ միշտ հերքելու այն կեղծ և սուտ լուրերը, որոնք մտադրեալ կերպով արատաւորում են իմ անբիծ գործունէութիւնը։

Նրանք, որոնք փաստեր ունեն իմ բացասական կողմերի վերաբերմամբ, Թող քաղաքացիական արիութիւն ունենան հրապարակ գալու։ Ես պատրաստ եմ։

Խաչատուր Կորխմազեան

—

Բագու, 15 դեկտեմբերի

«Մշակ» լրագրի № 181-ում պ. Աւ. Սահակեանը իր՝ Գանձակից ամսիս 8-ին՝ գրած Թղթակցութեան մէջ (Տեղեկ. գաւ.) հետեւեալ հարցն է տալիս.

«Հասարակութիւնը ի՞նչ վերաբերմունք ցոյց տայ դէպի այդ շանտաժիստները։ Եթէ նրանց յանձնում է իշխանութեանը, համ իր կեանքն է վտանգի տակ դնում, համ ժառանգում է «մատնիչ» տիտղոսը։ Եթէ այդ միջոցներից ոչ մէկին չէ դիմում, այն ժամանակ իրան կողոպտում են, Թալանում են և մինչև անգամ սպանում...»։

Մենք ևս, իբր հայ հասարակութեան անդամներից մէկը, Թոյլ ենք տալիս մեզ տալ հետեւեալ պատասխանը. Թէ երբ մարդիկ, Թողած մաքուր և ազնիւ աշխատանքը, տարիների ընթացքում կամ ծածուկ կամ աննյայտնի բեռ են դառել, այն էլ անտանելի բեռ, հասարակութեան համար, կեղեքելով ու Թալանելով նրան, ու չեն զլանում մինչև անգամ սպառնալիքների և սպանութիւնների դիմել, այդպիսիների դէմ պէտք է զինվէ ինքը հասարակութիւնը և հէնց իր անձնական շահերի տեսակէտից պէտք է բռնէ դրանց և, իր գիտցած ժողովրդական դատաստանը տեսնելուց յետոյ, յանձնէ իշխանութեանը՝ դուրս վռնտելու հասարակութեան միջից այդպիսիներին։

Բաղդասար Դօլուխանեանց

ՀԱՅՀՈՅԱՆՔԻ ՀԵՐՈՍԻՆ

(Նամակ խմբագրութեան)

—

Դարձեալ խուսափում են գաղափարային—սկզբունքային կռուի ելնելու իրանց հակառակորդի դէմ. դարձեալ հայհոյանք. և այս անգամ երեւելագոյն հայհոյաբանի բերանով։

Պ. Սլաքը «հազիւ Թերթել է 11—12 երես» (իր խօսքերն է) մեր «Թիւրքիայի ապագան» բրօշիւրից, շտապել է «քննադատական գրելու» («Վտակ» № 19)։ Հայհոյելու գիտութիւն ունեցողի համար այդքան կարդացածն էլ շատ է։ Նա կըրճում է 9-դ և 10-դ երեսների ամբողջ կապակցութիւնից ընդամենը երկու ցիտատ և շաղախում նրանց յիշոցական էպիտէտներով։

Նետենք պ. Սլաքի գիրկը իր աղայական հայհոյանքները և բաւականանք օբեկտիվ ու փաստացի նկատողութիւններով։

Խնդրում ենք մեր գրքոյկը կարդացած ընԹերցողին ուշադրութեամբ հետևել այս բանակռուին։

Ի՞նչ կէտի վրա է ծանրանում պ. Սլաքը։

Մեր գրքոյկի II-րդ գլխի սկզբում համեմատական հաշուեկշիռ ենք ենթարկում Թիւրքիայում և Եւրոպայում տեղի ունեցած յեղափոխական շարժումները՝ 18-րդ դարու կէսից մինչև 19-րդ դարու կէսը և գտնում հիմնական տարբերութիւններ։ Մենք ասում ենք, որ Արևմտեան Եւրոպայի լիբերալ բուրժուազիայի դասակարգային յեղափոխութիւնը ընդդէմ ֆէօդալիզմի՝ տեղի չէ ունեցել Թիւրքիայում. այստեղ բացակայել է և բացակայում է տակաւին այդ դասակարգը, որպէս մի տնտեսական հասունացած կաԹեգօրիա. Թիւրքիայում, ընդհակառակը, դրա փոխարէն գտնում ենք մանր ու ճնշված ազգերի ազատամարական կռիւ տիրապետող սուլթանական ռէժիմի դէմ։

Ի՞նչ է հետևցնում պ. Սլաքը։

«Միանգամայն սխալ է,—առարկում է պարոնը,—որ 18-րդ դարերի կէսից մինչև 19-րդ դարի կէսը Եւրոպայում յոկ դասակարգային կռիւ է եղել։ Կան և բաւական Թւով պատմական փաստեր Եւրոպայի սրբտում տեղի ունեցած նոյնիսկ այդ շրջանում։ Ով պատմութիւն գիտէ, նա կը հաստատէ մեր ասածը»։

Այո, պ. Սլաք, ուրիշները ևս գիտեն պատմութիւն, այն խոր տարբերութեամբ միայն, որ ուրիշները ազատ են պատմական փաստերն ու երևոյթները անմարս, անկապակցված և աշակերտական վարժողութեամբ գլխում չոր ու ցամաք խրօնիկա դարձնելու դժբաղդութիւնից։ Այդ դժբաղդութիւնից մի մեծ բաժին է ընկել ձեզ, ինչպէս այդ կը տեսնենք։

Նախ պօլեմիկական մի խարդախութիւն է պ. Սլաքի կողմից՝ դնել ուրիշի բերանը չասած խօսքեր. «...Եւրոպայում յոկ դասակարգային կռիւ է եղել»—վերագրում է մեզ պ. Սլաքը, որ մենք չենք ասել։ «Մի տեղ զուտ դասակարգային կռիւ էր...»—ասել ենք մենք, ժամանչելով բացառապէս բուրժուական յեղափոխութեան վրա և ոչ Թէ առհասարակ Եւրոպայում տեղի ունեցած պատմական փաստերի վրա (տես եր. 10, 15-րդ տող)։

Սակայն halt! պ. Սլաքը սխալմամբ կը կարծէ պահ մի, որ մենք էժան կրեդիտ ենք տալիս այն հնամաշ և ընդմիշտ անպէտք յայտարարված իդէալիստական-վերացական տեսակէտին, որ կազմում է դաշնակցութեան մտաւոր դաւանանքը։ Մեզ համար, եթէ ուզում էք իմանալ, չը կան անտի-դասակ. կամ հակադասակարգային պատմական փաստեր։ Բոլորը,—ընդունակ եղէք ըմբռնելու,—սկսած միստիկական-կրօնական, բարոյական-փիլիսօփայական, ազգային-ցեղական երևոյթներից մինչև բարիկադային արիւնահեղ կատաստրոֆները՝ ունեն իրանց ծագման և առաջխաղացման դասակարգային բնոյթը։ Եթէ մենք Արևմտ. Եւրոպ. բուրժ. յեղափոխութիւնը զուտ դասակարգային ենք անուանում, ապա Թիւրքիայում տեղի ունեցած ազատագրական շարժումները յայտարարում ենք ոչ Թէ անտի-դասակարգային, այլ՝ պատմական իրաւացիութեամբ՝ «ազգային միութիւնների ազատամարական կռիւ իր բուրժուական դասակարգային աստառով» (տես եր. 10, 7-րդ տող ներքևից)։ Ուրեմն չեն եղել հակադասակարգային պատմական փաստեր ոչ միայն Եւրոպայում, այլ և երկրագնդի վրա. այլ բան է, ի հարկէ, որ պատմական փաստերն ու երևոյթները ունեն դասակարգայնութեան տարբեր ձևեր, արտայայտութիւններ ու աստիճաններ (երբեմն ազգային, երբեմն քասսայական, երբեմն կրօնական վերնաշարշով ծածկված)։ Մատերիալիստական-գիտական այս տեսակէտը, տարակոյս չունենք, միշտ անմատչելի կը մնայ «ազգայնական» ֆետիշիզմը իրանց sine qua non դարձրած Սլաքների համար։

Պ. Սլաքը մի տարօրինակ լօգիկայով ապշում ու շուարում է, Թէ ինչու մենք չենք Թւել եւրոպական «ազգային ազատամարտերից մի քանիսը»։ Օրինակ Իսպանիայի, Պրուսիայի անկախութեան կռիւը Նապօլէօնի դէմ, Իտալիայինը Աւստրիայի դէմ և այլն, անտեղի Թւելով՝ նոր դասարանական աշակերտի նման, ընդհանուր պատմութիւնից մի քանի դէպքեր։

Եթէ մենք այդ փաստերը չենք Թւել, նշանակում է կամ մենք պատմութիւն չը գիտենք կամ դիտմամբ կեղծել ենք,—տրամաբանում է պ. Սլաքը։

Այն ո՞վ է, որ ասում է, Թէ եւրոպական chapeau ծածկող և եւրոպական տարազ կրող ամեն մէկը անհրաժեշտօրէն ազատ է հօտենտոտեան լօգիկայից։

Մի րօպէ անգամ չէ մտածել պ. մատենախօսը, Թէ կարիք, անհրաժեշտութիւն ունեցե՞լ է հեղինակը իր անտեղի պահանջին բաւարարութիւն տալու։ ՄԲԹէ մենք ձեռնարկել էինք բովանդակ Եւրոպայի առհասարակ պատերազմների և ազատամարտական ակտերի (18—19-րդ դարերում) ամբողջական նկարագիրը տալու։

Անպայման ոչ,—կասէ խելկատակ լօգիկայից ազատ ամեն մէկը, ով կարդացել և ըմբռնել է մեր աշխատութեան նպատակը։

Պ. Սլաքը աւելացնում է, ի հարկէ, որ մենք Թիւրքիայում տեղի ունեցած ազատագրական շարժումները պէտք է ոչ Թէ Եւրոպայի յեղափ. ակտերի հետ համեմատէինք, այլ իսպանական, պրուս-գերմանական, իտալական կռիւների հետ՝ ընդդէմ օտար պետութիւնների՝ Ֆրանսիայի, Աւստրիայի։

Եթէ պ. Սլաքը մի փոքր վերև մատնեց իր տրամաբանական բռնազբօսիկութիւնը, ապա այստեղ աւելացաւ դրան պատմական փաստերի ու երևոյթների տկար ըմբռնողութիւնը։

Եղե՞լ է արդեօք Թիւրքիայում բուրժուական երրորդ դասի ձեռներէցութեամբ յեղափոխութիւն միջնադարեան բռնակալ ռէժիմի դէմ այն պատմական կլասիք իմաստով, ինչպէս Արևմտ. Եւրոպայում բուրժ. յեղափ. է ունեցել։ Վերլուծելով Թիւրքիայի տնտեսական գործօնների ու սօցիալական էլեմենտների կօնկրետ դրութիւնը, ապացուցում ենք մենք այդ պատմա-քաղաքական երևոյթի բացակայութեան պատճառները սուլթանների երկրում։

Տեսնո՞ւմ էք, պ. Սլաք, այս է մեր առաջադրած ու հիմնաւորած Թեզիսը, որի համար մեր պատմական անալօգները պիտի որոնէինք եւրոպական յեղափոխութեան տարեգրութեան էջերում։ Իբրև լրացուցիչ պարզաբանութիւն, իբրև իլլիւստրացիա մենք աւելացրել ենք, որ Թիւրքական հողի վրա բուրժուազիայի և ֆէօդալիզմի դասակարգային կռուի ու ընդհարման փոխարէն մենք գտնում ենք մանր ու ճնշված ազգերի ազատամարական կռիւ տիրապետող ռէժիմի դէմ, որ ունի իր հիմնական տարբերութիւնները Եւրոպ. յեղափ. նկատմամբ։ Տեսնո՞ւմ էք, կրկին, պ. Սլաք, որ վերջինս լինելով սոսկ մի կօրելատ, մի լրացուցիչ պարզաբանութիւն, կարիք ամենևին չունէինք յիշելու «ազգային ազատամարտերից մի քանիսը» Եւրոպայում իբրև անալօգներ, պատմական համեմատութիւններ։ Մատենախօսական պարտականութիւնը պահանջում է ամենից առաջ հասկանալ հեղինակի առաջադրած՝ կենտրոնական միտքը, իսկ հայհոյելու պահանջ նա չէ դնում երբեք։

Սակայն եթէ մենք նոյնիսկ մի րօպէ հեռու գնանք և քննենք պ. Սլաքի պատմական անալօգիաների էութիւնը, կը գտնենք ոչ Թէ փաստերի ու երևոյթների պատմական լուսաբանութիւն, այլ փաստերի ու երևոյթների պատմական բռնաբարութիւն։ Պարոնը ուզում է, որ Թիւրքիայում ապստամբվող մանր ժողովուրդների (հելլէնների, սլաւօնների և հայերի) ազատագրական շարժումը համեմատված լինէին իսպանական, պրուս-գերմանական և այլ անկախութեան կռուի հետ Նապօլէօն Բօնապարտի դէմ։

Պ. Սլաք, սովորեցէք պատմութիւնը ըմբռնել. դասագրքեր սերտելը ձեզ ամենևին չի օգնի։

Մի տեղ ժողովուրդների դարաւոր ստրկացում, սուլթանական գահի սեփական, անկողոպտելի հպատակները, պետական միևնոյն տերիտօրիայի անմիջական քաղաքացիները դարձած մանր-մունր ժողովուրդների պատմական ազատագրութեան փաստը պ. Սլաքը համեմատում է պրուս-գերմանական, իսպանական—այսինքն անջատ քաղաքական տերիտօրիաների, պետական ուրոյն մարմինների և միայն մի քանի տարի «Թագաւորների Թագաւոր» մեծ աշխարհակալի գերագոյն օկուպացիային ենԹարկված երկիրների—քաղաքական անկախութեան փաստի հետ։

Խոնարհվել կարելի է պատմական այս գոհար հասկացողութեան առաջ...

Բայց ինչ ուզում էք ասէք, այստեղ ևս մատնվում է մի այլ բան՝ դաշնակցական նացիօնալիզմի տիպիք ուղղութիւնը։

Բօլգարիայի, Հայաստանի, Մակեդօնիայի ապստամբութիւնը՝ պատմական փաստի քաղաքական արժէքով, ոչ միայն չէ կարելի համեմատել պրուս-գերմանական, իսպանական անկախութեան կռիւների հետ, այլ և նոյնիսկ մի Տրանսվալի անկախութեան կռուի հետ։

Ինչո՞ւ։

Որովհետև երկրորդ կարգի երկիրները ունէին պետական տերիտօրիական ինքնամփոփումն, համարվում էին քաղաքական ուրոյն միաւորներ (единицы) և սոսկ վասալական յարաբերութեան մէջ էին սուվերէն գերիշխանի հետ, իսկ առաջինները զուրկ էին այդ բոլորից, սոսկ հպատակներ,—քաղաքական կաԹեգօրիա չէին կազմում։

Այսօր Հայաստանը մնացած է՝ իբրև քաղաքական единица (միաւոր), նա գոյութիւն չունի այլ ևս՝ իբրև տերիտօրիական միութիւն, նա գոյութիւն ունի միայն որպէս մի աշխարհագրական երկրամաս (geographisches Land), ուրիշ ոչինչ։

Ում առողջ զգայարանները չեն խլացել ու բԹացել մանր բուրժուական հոլըրապատրիօտիզմի ժխորալից Թմբկահարութիւնից, նա այլապէս չի մտածիլ։

Թող պ. Սլաքը իրայատուկ ֆէլիէտօնական մակերեսութեամբ նետէ բոլոր տարբեր փաստերն ու երևոյթները միևնոյն Mischmasch զամբիւղի մէջ, փոյթ չէ։

Մեր բրօշիւրը կարդացած ամեն մի ընթերցող պիտի ապշէ՝ կարդալով դաշնակցական Սլաքի գրախօսականը։ Հայհոյանքներ՝ ալֆայից-օմեգա։ Ոչ մի խօսք մեր Թեզիսի մասին։

Դուք մերկացնում էք մի ամբողջ կուսակցութեան morsch, խարխուլ իդէօլօգիան, գաղափարային-սկզբունքային սնանկութիւնը, գործելակերպի բարբարոսական սխալները։

Իսկ նրանք պաշտպանվում են Զաքարիայի նման և լաւագոյն դէպքում միայն հայհոյում են ձեզ ասիական յիշոցներով։

Դուք տեսակէտներ էք հիմնաւորում ու զարգացնում այն երկրի մասին, որի նկատմամբ Դաշնակցութիւնը իր 17 տարվայ ընթացքում անընդունակ եղաւ վերջին ծայր մի բան ասելու և արտադրելու։

Դարձեալ հայհոյում են ձեզ ու խուսափում։

20-րդ դարի սկիզբը քաղաքակրթական նոր ու ծաղկափթիթ շրջան բաց արաւ Արևմտեան Եւրոպայում, ազատագրական արշալոյս ցողեցրեց ռուսական երկնակամարի տակ, իսկ հայ ժողովրդի Թշուառ իրականութեան բաժին ընկաւ հայհոյանքների և բռունցքների հերոսների տիրապետութիւնը։

Genug Kinder übergenug
Es giebt ein Mass in den Dingen.

Բ. Իշխանեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐՕՖԷՍՕՐ ՏՕՄՍՕՆ

—

Լօնդօնից հեռագրով լրագիրներին յայտնեցին, որ ժամանակակից նշանաւոր ֆիզիկոսներից մէկը՝ Գլազգօի համալսարանի ֆիզիկայի պրօֆէսօր Վիլեամ Տօմսօնը վախճանվեց։

Ինչպէս ասում է հանգուցեալի կենսագիրներից մէկը, Տօմսօնի նշանակալից ծառայութիւնները զուտ և գործնական գիտութեան մէջ՝ լիովին գնահատել են նրա ժամանակակիցները։ 1866 Թւին Տօմսօնին շնորհվեց ազնուական կոչում, իսկ 1892 Թ. Վիկտօրիա Թագուհին շնորհեց նրան «պերութիւն» «լօրդ Կէլվին» տիտղոսով։ Տօմսօնը յայտնագործել և բարելաւումներ է մտցրել շատ գործիքների մէջ, որոնք գործադրութեան մէջ են գիտութեան և տեխնիկայի մէջ։ Անգլիան Տօմսօնին է պարտական բարձր դպրոցներում աւանդվող մաթեմատիկայի, ֆիզիկայի փայլուն դրութեան համար։ Այդ գիտութեան վրա նրա արած ազդեցութիւնը ընկնում է նաև միւս ազգերի գիտնականների գործունէութեան վրա։ Տօմսօնը գրել է մի քանի հատոր ուսումնասիրութիւններ իր մասնագիտութեան մասին և 250-ից աւելի գիտական բնաւորութիւն ունեցող յօդուածներ։ Նա մեռաւ 82 տարեկան հասակում։

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

—

«Times» լրագրի վերջին համարներում տպված է մի Թղթակցութիւն Թէհրանից, նոյեմբերի 17-ից (30-ից)։ Այդ Թղթակցութեան մէջ գտնում ենք շատ հետաքրքիր մանրամասնութիւններ իրերի դրութեան մասին Պարսկաստանում, շահի փորձից առաջ՝ առաջացնելու պետական յեղափոխութիւն։ Բերում ենք մի քանիսը այդ մանրամասնութիւններից։

Շահը կարծում էր, պատմում է «Times»-ի Թղթակիցը, որ մէջլիսի կողմից իր համար նշանակած 100,000 ֆունտ ստէրլինգ ռոճիկը տրվում է իրան միայն որպէս «ջրի խարջլուխ»։ Իսկ երբ իմացաւ, որ ինքը պարտաւոր է այդ գումարից իր բոլոր ծախսերն անել և բացի դրանից դեռ կայսերական հարեմի, պալատների, այգիների, խոհանոցի, ուղտերի և այլ ծախսերն էլ պէտք է այդ գումարից հոգացվեն, մեծ էր շահի դժգոհութիւնը։ Մինչև այժմ այդ ծախսերը կլանում էին պետական եկամուտների նշանաւոր մասը և նրանց վրա հսկող պալատականները մինչև անգամ վճարում էին շահին (ի հարկէ ժողովրդից կորզած դրամներով) մեծ գումարներ որպէս վարձատրութիւն այն բանի, որ իրանք մօտ են գտնվում «տիեզերքի կենտրոնին»։ Օրինակ՝ փարրաշխանայի հրամանատարը տալիս էր շահին մօտ 10,000 ֆունտ ստէրլինգ տարեկան և սակայն դեռ մի տարի լրիւ չը ծառայած՝ չափազանց հարուստ մարդ դարձաւ արդէն։ Տեսնելով, ուրեմն, որ իր համար նշանակված ռոճիկը բաւարար չէ, շահը յայտնեց, որ ինքը չէ ցանկանում ընդունել այդ գումարը և ինքը կը պահէ իր պալատը։ Եւ ահա այդ պատճառով բոլոր պալատականները մէջլիսի կատաղի Թշնամիները դարձան։ Նրանց լիակատար ազատութիւն էր տրված յայտնելու իրանց զայրոյթը, իսկ նրանցից մի քանիսը,—օրինակ շահի ջորեպանները, որոնց Թիւը հարիւրների է հասնում,—սարսափահար արին քաղաքը և սպառնում էին սրի անցկացնել մէջլիսի անդամներին։

Ապա հանգուցեալ Նասր-էդդին շահի այրիները, որոնք զրկվել են այժմ իրանց Թոշակի մի մասից, դիմեցին մէջլիսին մի նամակով, որի մէջ յայտնում են, որ իրանք երբեմն միապետի ամուսիններ էին և որ վայել չէ սրբազան մէջլիսին զրկել նրանց ռոճիկից այժմ, երբ արդէն սպիտակ մազեր ունեն։ Այդ առիԹով մէջլիսում շատ տաք վիճաբանութիւններ սկսվեցին։ Մէջլիսի անդամ պրինց Ասադ-ուլ-Միրզան պաշտպան է հանդիսանում այդ խնդրագրին, առարկելով այն, Թէ Եւրոպայում էլ յարգում են արքայական ընտանիքին պատկանող կանանց։ Սակայն ձախակողմեան կուսակցութեան հռետորներից մէկը, Թախիզադէն, դէմ էր Նասր-էդդին շահի այրիների խնդիրքը յարգելու մաքին, մատնացոյց անելով այն, որ եւրոպական պետութիւններում, որոնց բիւջէտները հասնում են հարիւրաւոր միլիօնների, Թագաւորն ունի միայն մի կին, իսկ Պարսկաստանում, որի բիւջէտը շատ չնչին է, ժողովուրդը ստիպված է ռոճիկ տալ դիւժիններով կանանց և նրանց բազմաթիւ սերունդներին։ Մի ուրիշ հռետոր ասում էր, որ Զիլլի-Սուլթանի նման հարուստ պրինցները կարող են իրանց հաշւով պահել իրանց բազմաթիւ խորթ մայրերին։ Ապա երրորդ հռետորն ասում էր, որ շահի այրիները կարող էին ծախել իրանց Թանգագին քարերը և դրանով գլուխը պահել, փոխանակ մէջլիսից պահանջելու, որ նա նրանց համար հարկեր վերցնի խեղճերից ու Թշուառներից, օրինակ Բիրմանի և Խորասանի նահանգների գիւղացիներից։

Հաւաքված զայրոյթի ազդեցութեան տակ շահը վերջապէս յայտնեց մէջլիսին իր ուլտիմատումը, այն է՝ Թէ պէտք է բաժանել օրէնսդրական և կառավարական իշխանութիւնները, Թէ ինքն իրաւունք ունի նշանակել մինիստրներ, Թէ պէտք է փակել քաղաքական միութիւնները և այլն։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Համադան, 28 նոյեմբերի

Նախորդ նամակովս մոռացել էի գրել, որ ամենայն հայոց կաթողիկոսի հոգեհանգստի օրը տեղիս բողոքականութիւնը այստեղ հաստատվելու օրից այս առաջին անգամն էր, որ միսսիօնարները մասնակցել են ազգային տօնին. կոչված էին տեղիս հայերի խանութներն ու ռուսահպատակ առևտրական տները. հոգեհանգստի օրը պատարագիչն էր տեղիս փոխանորդ Խորէն վարդապետ Տէր-Վարդանեանը, որ պատարագից յետոյ կարճ և ազդու խօսեց նկարագրելով Խրիմեան Հայրիկի կենսագրութիւնը և այն դերը, որ նա կատարել է հայութեան մէջ։ Պատարագից յետոյ առաջնորդարանում փոխանորդին այցելեցին տեղիս արտաքին գործոց մինիստրի ներկայացուցիչը—քարգուզար—և տեղիս եւրոպացիները, յայտնելով իրանց ցաւակցութիւնը կաթողիկոսի մահվան առիթով։

Ալ. Մելիք-Դաղայեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԳԵՐՄԱՆԻԱ

Էլզաս-Լօտարինգիայի աւտօնօմիայի նախագիծը.—«Echo de Paris» լրագրին (21 դեկտեմբերի ն. տ.) հեռագրում են Ստրազբուրգից. «Կօլմարեան ընտրողական շրջանի ներկայացուցիչ րէյխստագի պատգամաւոր աբբատ Վետտերլէն հաղորդում է Բերլինից, որ նա Էլզաս-Լօտարինգիայի համար մշակված սահմանադրութեան նախագիծը համարում է արդէն իրագործման մօտ»։

Լօտարինգիայի գործերի ստատս-քարտուղար ֆօն-Կեօլլերը, որ մի քանի օր առաջ գնացել էր Բերլին, դեկտեմբերի 19-ին (ն. տ.) երկարատև խօսակցութիւն է ունեցել իշ. ֆօն-Բիւլօվի հետ սահմանադրութեան այդ նախագծի մասին, դէպի որը, ինչպէս յայտնի է, րէյխստագը վաղուց արդէն բարեհաճ աչքով է նայում։

Այդ ամբողջ կարևոր գործում խոչընդոտ կարող է հանդիսանալ միայն դաշնակցական խորհուրդը, այնուամենայնիւ յոյս ունեն, որ նրան կարելի կը լինի տրամադրել յօգուտ այդ նախագծի։

ՊՕՐՏՈՒԳԱԼԻԱ

Դաւադրութիւն թագաւորի կեանքի դէմ.—«Exchange Telegraph C°» լրագրի ասելով, Կարլոս Թագաւորի կեանքի դէմ մօտ օրերս անաջող մահափորձ է կատարված։

Թագաւորական ընտանիքը ներկայ էր Լիսսաբօնի տաճարում, ի յիշատակ պօրտուգալական զօրքերի տարած յաղթութեան՝ ամերիկական գաղութներում, մատուցանվող պատարագին։ Արարողութեան ժամանակ գաղտնի ոստիկանները ուշադրութիւն են դարձնում մի երիտասարդ քահանայի վրա, որը ջղային դրութեամբ մօտենում էր սեղանին։

Քահանային խոյն կալանաւորում են և խուզարկում. նրա մօտ գտնվում են Լիսսա-

բօնեան տաճարի մակարդակը, մի դաշոյն և մի բրաունինգ։

Նա հրաժարվել է յայտնել իր անունը։ Ոստիկանութիւնը հաւատացած է, որ կալանաւորվածը այն անիշխանական կօմիտէի անդամներից մէկն է, որը նպատակ է դրել սպանել Թագաւորին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕՆՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ▬—◆

ԲԱԳՈՒ (Գանձակ, Եւլախ)

Արագ—գիշ. 12 ժ. 28 ր., Գանձակ—գիշ. 5 ժ. 42 ր., Եւլախ—առաւ. 7 ժ. 19 ր., Բագու—ցեր. 2 ժ. 43 ր.։ Պոստ.—երեկ. 9 ժ. 41 ր., Գանձակ—գիշ. 4 ժ. 13 ր., Եւլախ—առ. 6 ժ. 27 ր., Բագու—ցեր. 5 ժ. 39 ր.։ Մարդատար—ցեր. 7 ժ 53. ր., Գանձակ—ցեր. 2 ժ. 10 ր., Եւլախ—ցեր. 4 ժ. 21 ր., Բագու—գիշ. 1 ժ. 50 ր.։

ԲԱԹՈՒՄ (Փօթի, Միխայլօվօ, Ռիօն)

Մարդատար (№ 7).—առ. 10 ժ. 58 ր., Փօթի—ցեր. 1 ժ. 30 ր., Միխայլօվօ—ցեր. 2 ժ. 58 ր., Ռիօն—երեկ. 7 ժ. 21 ր., Բաթում—գիշ. 12 ժ. 10 ր.։ Պոստ.—առ. 9 ժ. 15 ր., Փօթի—ցեր. 11 ժ. 49 ր., Միխայլօվօ—ցեր. 1 ժ. 19 ր., Ռիօն—երեկ. 5 ժ. 47 ր., Բաթում—գիշ. 10 ժ. 45 ր.։ Մարդատար (№ 5)—գիշ. 11 ժ. 22 ր., Փօթի—գիշ. 1 ժ. 57 ր., Միխայլօվօ—գիշ. 3 ժ. 20 ր., Ռիօն—առ. 7 ժ. 41 ր., Բաթում—ցեր. 12 ժ. 27 ր.։

ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրօպօլ)

Ապր.-մարդ.—ցեր. 3 ժ. 16 ր., Ալէքսանդրօպօլ—գիշ. 2 ժ. 30 ր., Երևան-Ուլուխ. առ. 8 ժ. 22 ր.։ Պոստ.—գիշ. 1 ժ. 8 ր., Ալէքսանդրօպօլ—ցեր. 11 ժ. 53 ր., Երևան—Ուլուխ.—ցեր. 5 ժ. 35 ր., Նախիջևան—գիշ. 12 ժ. 32 ր., Ջուլֆա—գիշ. 2 ժ. 35 ր.։

ԲԱԳՈՒԻՑ (Պետերբուրգի ժամանակով)

Մարդատար—առ. 4 ժ. արագ.—ցեր. 4 ժ. 4 ր.։ Պոստ.—ցեր. 11 ժ. 23 ր.։

ԲԱԹՈՒՄԻՑ—Մարդ.—առ. 10 ժ. 38 ր.։ Պոստ.—առ. 6 ժ. 49 ր.։ Մարդատ.—ցեր. 5 ժ. 46 ր.։

ԵՐԵՒԱՆ-ՈՒԼՈՒԽԱՆԼՈՒԻՑ — Պոստ.—առ. 1 ժ. 58 ր.։ Ապրանք.-մարդատար—գիշ. 1 ժ. 50 ր.։

ՋՈՒԼՖԱՅԻՑ—Պոստ. գիշ. 4 ժամին։ Մարդ.-ապրանք.—ցեր. 3 ժ. 21 ր.։

ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ — Պոստ.—7 ժամին։ Մրդ.-ապրանք.—6 ժ. 58 ր.։

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
և վաճառվում են
„ԱՐԱԳՍ"
1908 թ.
ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
հետաքրքիր և հարուստ բովանդակութեամբ։
Գները՝ պատինը արժէ 40 կ.
ծոցինը » 20 կ.
Դիմել՝ Александрополь, типографія Саноянa. Թիֆլիսում պահեստը գտնվում է «Փարոս» գրախանութում՝ Նիկ. Մատինեանի, Эрив. площадь. Գումարով գնողներին ձեռնտու պայմաններ։
(Ե. հ. կ.) 26—18

Լոյս տեսաւ
Ս. ԴԵՄՈՒՐԵԱՆԻ
„ՔՆԱՐ"
երգարանը (եւրոպական նօտաներով)։ «ՔՆԱՐ»-ը բաղկացած է 106 երգ., մեծ մասը ժողովրդական երգերից. գինն է 1 ր.։ Դիմել՝ Баку, Арм. школа, Гимназическая ул., Степану Демурянцу, կամ Моздокъ, С. И. Яралову, և կամ Петербургъ, ред. „Сапричъ", Окрояну. (օ.մ.) 30—30

Իշխանութեան թոյլտւութեամբ Թիֆլիսում հիմնված է
Ատաղձագործների ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ԲԻՒՐՕ,
որը վերցնում է ատաղձագործական աշխատանքներ չափաւոր գներով, համեմատ աշխատավարձի, կտորով և օրով. միևնոյն ժամանակ վերջինի գները բաժանված են 4 կատեգօրիայի։ Բիւրօն երաշխաւոր է իր անդամների համար միայն այն դէպքում, եթէ պատուէրը տրված է իրան—բիւրօյին։ III քաղաքամաս, Ռուսսկայա և Վանքսկայա փող. անկիւն, տուն Ներսիսեան դպրոցի, վերին յարկ, ամեն օր ցեր. 7—3 ժամը։
(կ.) 7—8

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
Մ. ՋՄՇԿԵԱՆԻ
ԾՈՑԻ 1908 թ. ՊԱՏԻ
ՍԵՂԱՆԻ
ԵՒ
„Армянскій календарь съ предсказаніями"
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Մեծ քանակութեամբ գնողները դիմում են՝ Թիֆլիս, Գարաևվսկայա № 5, ՄԱԿԱՐ ՋՄՇԿԵԱՆ.
(շ. ե.) 9—12

Պր. Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑ
«Բուսական աշխարհից»
Նպաստ հայ գիւղատնտեսութեան
ՆԵՐԿԱՏՈՒ ԲՈՅՍԵՐ
ԵՒ
Դրանց ներկերը—հին հայկական եղանակով պատրաստելու ձևը։
Գինն է 25 կոպ.
Ծախվում է բոլոր գրավաճառանոցներում։
(ու.) 7—10

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Առաջիկայ
1908 թւի
„ԽԱԹԱԲԱԼԱ"
Երրորդ տարի
Երգիծաբանական, սատիրական եւ գունաւոր պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
Տարեկան գինը ամեն տեղ . . . . 5 ռուբ. —
Կէս տարվանը . . . . 3 ռուբ. —
Երեք ամսվանը . . . . 1 ր. 50 կ.
Արտասահման . . . . . . 6 ռուբ. —
Կարելի է վճարել և մաս-մաս՝ յունվարին 3 ր. և մայիսին 2 ր.
Հասցէն՝ Тифлисъ, редакція „Хатабала". Արտասահման՝ Rédaction „Chatabala" Tiflis (Caucase).
Այն անձինք, որոնք կը տարածեն իրանց շրջանում 10 օրինակ «Խաթաբալա», իրանք կը ստանան մի օրինակ ձրի ամբողջ տարի։ 5—5

19 ԲԱԶՄԱՎԷՊ 08
ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Բազմավէպ հանդէս Հայկական Ճեմարանի, նուիրված ազգային գիտութեանց, գեղեցիկ դպրութեանց, հայկական այժմէութիւններու, կը ներկայացնէ բնախօսութիւններ և Թղթակցութիւններ՝ հայոց պատմութեան, մատենագրութեան, գեղարուեստներու. մասին. գրական բաժնին մէջ՝ քնարերգութիւններ, Թարգմ. վէպեր. Նորութեանց բաժնին մէջ տեղեկատուութիւններ նորագոյն գրքերու, հանդէսներու, դէպքերու մասին։ Իր նպատակն է բարձրացնել հայ ժողովուրդը գիտութեամբ իր անցելոյն և իր դարուն։ Գինն է փր. 10, տոլար՝ 2, ռուբլի՝ 4։ Դիմել ուսումնական Թղթակցութեանց համար. Rédaction de la Revue «Bazmavep».
Բաժանորդագրութեան համար. «Imprimerie Arménienne»—St. Lazare VENISE (Italie)
6—1

ՄԵՂՐ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆԻ մեղուանոցից
Ծախվում է պուդերով
Պուդը 9 ռուբլի։ Գալ առ. ժ. 11—2. Հասցէն Բեթղեհէմի վերևը, տ. Սիմէօնեանցի № 3, Կուսանաց վանքի մօտ. վերին յարկ։ 2—5

Բացված է բաժանորդագրութիւն
1908 թ. բարեփոխված
„ՀՈՎԻՒ"
ազգային, հասարակական եւ գրական շաբաթաթերթի
(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)
Բաժանորդագ. Տարեկան . . . 4 ր. / Կէս տարվան . 2ր. 50կ.
Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
ԿԱՐԵԼԻ Է ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՎԵԼ
Թիֆլիսում — խմբագրատանը՝ Большая Ванкская № 16. Կայսրութեան այլ քաղաքներից—դիմել՝ Тифлисъ, редакція „Овивъ" Արտասահմանից—Rédaction «Hovive» Caucase (Russie)։
Խմբագիր-հրատարակիչ՝ ԵԶՆԻԿ ա. ք. ԵՐԶՆԿԵԱՆՑ

ՄԻԱՅՆ 60 ԿՈՊԷԿ
Փորձեք ռիսկ, իսկ օգուտ՝ ահագին։ Ով կուղարկէ 60 կոպէկ (կարելի է պօստի նամակադրոշմերով), նա շանսեր ձեռք կը բերի՝ կարճ ժամանակամիջոցում 4000 ՌՈՒԲԼԻ ԿԱՆԽԻԿ ստանալու։ Հասցէագրել՝ Товариществу «Капиталъ». Варшава, Королевская, 29—9.
(14, 20) 2—2

„Գուտտենբերգ"
գրավաճառանոցում վաճառվում են
Վիտայի—Քրիստոնէական, Թարգմ. Հ. Ե. Վ. Թումաճանեանի 1 ր. 50 կ.
Համառօտ դասագիրք ընդհանուր պատմութեան. պատմութիւն արևելեան ազգաց Յուն. և Հռովմ. 2 հատ 1 ր. 50 կ.
Գալֆայեան Հ. Ա.—Համառօտ պատմութիւն Հռովմայեցւոց 1 ր. »
Երեմեան Հ. Ա.—Տաղնապը, ազգավէպ » 50 կ.
Ալիշան Հ. Ղ.—Արշալոյս քրիստոնէութեան հայոց 1 ր. »
Քուշներեան Հ. Բ. Վ.—Առակք ծաղկաքաղը և ինքնագիրք 1 ր. 25 կ.
Շարք ընտիր պատմ.—Աղէտալի դիպուածք Իրլանդիոյ » 50 կ.
Գանթարեան Հ. Ս.—Կլոպշտոկի մեսիական Հանճար 1 ր. 50 կ.
Սարգսեանց Հ. Բ. Վ.—Երկհարիւրամեայ գրական գործունէութիւն և նշանաւոր գործիչներ 3 ր. 50 կ.
Սկզբունք պատմութեան հին ազգաց. դպրատանց ազոց համար » 50 կ.
Բոսուէ—Մատծութիւնք յաւետարանն կամ յետին շաբաթ Յիսուսի II 5 ր. 50 կ.
Սեթեան Հ. Ե. Վ. Պատմութիւն չորից ինքնակալութեանց » 50 կ.
Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց և վենետաց 1 ր. 50 կ.
Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց գ. անկանօն գիրք առաքելականք 2 ր. 50 կ.
Ալիշան Հ. Ղ. Մ.—Շնորհալի և պարագայ իւր 1 ր. 75 կ.
Աղօթամատոյց պատկերազարդեալ սրբոյն Գրիգորի 1 ր. 25 կ.
Անդրիկեան Հ. Ն. Բիւզանդի Մամիկոնեանները » 50 կ.
Քիւշներեան Հ. Բ. Վ.—Յարաութինք Սաղմոսաց Դաւթի » 50 կ.
Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան 1 ր. »
Ագաթանգեղայ պատմութիւն » 80 կ.
Ճարեան Հ. Ա. Վ.—Պատմութիւն գաղիացւոց 2 ր. »
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ" Г. Галустянцу.

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ"
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԵԴԵՎԻ
„Этикетъ утвержденъ прав." մակագրութիւնով

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
(10, 20 30) 40—50

ԲԺԻՇԿ
Ա. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ
Հիւանդութիւններ
Ընդունելութիւն 10—12 առաւօտ. / 6— 7 երեկ.
Րտիշչևսկի փող. № 22.
(ամ. օ.) 10—7

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 67—100

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր 12—1 ժ. առաւօտեան / 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց տ. Ծավճավաձէի № 36.
(ա.օ.) 67—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ։
Միքայէլեան փողոց, № 27։
(Ե. հ. շ. կ.) 41—50

Կիրակի, դեկտեմբերի 23-ին 1907 թ.
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
ՅՕԳՈՒՏ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Տեղի կունենայ
ԾԱՂԿԱԶԱՐԴ ԵՐԵԿՈՅԹ
Կը ներկայացնեն օպերաներից մի քանի տեսարաններ հայերէն լեզուով Ա. Մանուկեանի.
I. «ԱԻԴԱ» օպերայից՝ II գործողութեան ա. պատկեր, մասնակցութեամբ տ. Ստեփանեանի, օր. Մէլիք-Բաբախանեանի և սիրողների երգեցիկ խմբի.
II. «Տրուբադուր» օպերայից, IV գործ., մասնակցութեամբ Նորեկի, և Գալիեվի ղեկավարութեամբ։
ՎԻՃԱԿԱԽԱՂ ԵՒ ՊԱՐԵՐ։
Խնդրում են բոլոր այցելուներին ծաղիկներ ունենալ. այս կարգադրութիւնը չը կատարողները ենթարկվում են 20 կոպէկ տուգանքի։
Դահլիճը շքեղ զարդարված կը լինի ծաղիկներով ու կանաչով. ծաղկեայ կիօսկներ և բուֆէտ։
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ
ԳՈՅՆԶԳՈՅՆ ՃԱՃԱՆՉՆԵՐ
Սկիզբը երեկոյեան ժամը 9-ին։
Տոմսակների գինն է 2 ր. 20 կ., ուսանողների համար 50 կոպ.։
Տոմսակները նախօրօք կարելի է ստանալ Արտիստական ընկերութեան կասսայում։
Ռեժիսեօր՝ պ. ԲԵԼՍԿԻՅ
(2, 9, 12, 16, 20, 23) 4—6

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշուապահութիւն և ուրիշ մասնագ. առարկ.
Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։
Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքներն սկսվելու են 1908 թ. յունվարի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։
Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան Թոյլատրած ծրագրի համաձայն, ատտեստատներ։
Դրանից անկախ՝ բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և Թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул , № 22, ամենայն օր։
Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։
(կ. ե. հ.) 5—15

Բացված է բաժանորդագրութիւն
„ՄԵՐ ՁԱՅՆԸ"
Հասարակական, գրական և քաղաքական օրաթերթի։
«Մեր ձայնը» կը սկսվի հրատարակվել Նոր-Նախիջևանում, 1907 թ. դեկտեմբերի 1-ից, և լոյս կը տեսնի շաբաթը երեք անգամ։
«Մեր Ձայնում» կը տպագրվեն հասարակական գործիչների պատկերներ, կարևոր նկարներ և ծաղրանկարներ։
«ՄԵՐ ՁԱՅՆԻ» տարեկան բաժանորդագինն է՝
Ռոստովում (Դոնի ափին) և Նոր-Նախիջևանում . . . . . 5 ր.
Դրսում . . . . . 6 ր.
Արտասահմանում . . . . . 10 ր.
1908 թ. համար բաժանորդ գրվողները կը ստանան 1907 թ. դեկտեմբեր ամսի համարները ՁՐԻ։
Բաժանորդագրութիւնը ընդունվում է՝
1. «Մեր Ձայնի» խմբագրատանը, Նոր-Նախիջևան, Եկատերինեան հրապարակ, տ. Մալխեանի, № 20.
2. Ռոստովում (Դոնի ափին) հետևեալ գրավաճառանոցներում. „Наука и Жизнь", Большая Садовая, Գրանդ Օտէլի հանդէպ, և „Образованіе", Большая Садовая, Վոլժկօ-Կամսկի բանկի հանդէպ։
3. Թիֆլիսում՝ «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրավաճառանոցներում։
«Մեր Ձայնին» աշխատակցելու են հայ գրականութեան մէջ եղած յայտնի գրողները ու հրապարակախօսները։
Խմբագիր-հրատարակիչ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆ
(հ. շ.) 11—8